

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

5

«Իրավաբանական Լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ծևակորմանը

2006թ. հոկտեմբեր, թիվ 5

Պետությունների անսասան հիմքը արդարադարձությունների համարել ՊԻՆԴԱՐՈՒ

Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը այսօր կարելի է համարել Հայաստանում ամենահրատապ և արմատական լուծումներ պահանջող խնդիրներից մեկը: Քաղաքացին լիովին վստահ չէ, որ իր խախտված իրավունքների պաշտպանության համար կարող է ապավիճել հայրենական արդարադատությանը, իսկ արդարադատություն իրականացնելներն էլ լիարժեք չեն գիտակցում իրենց դերի և պատասխանատվության չափը: Սահմանադրական փոփոխություններից հետո քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցում իր ուրույն տեղն ու դերն է փորձում գտնել ՀՀ Սահմանադրական դատարանը, թե, հանուն ճշմարտության պետք է նշե, որ քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցում ՍԴ-ի լիազորությունները լիարժեք չեն: Այնուամենայնիվ, դատական համակարգի նկատմամբ թերահավատ քաղաքացիները մեծ սպասելիքներ ունեն ՍԴ-ից՝ դրա գործելավերագում տեսնելով Հայաստանի արդարադատության նտապատկերը: Մնում է համբերել և տեսնել, թե ՍԴ-ն, իր սահմանափակ լիազորություններով հանդերձ, որքանով կարդարացնի քաղաքացիների սպասելիքները:



ԼՐԱՏՈՒ

ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ

Իրավաբանական լրատուն հարցազրոյց է անցկացրել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դրվագը, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի հետ: Հարցազրոյցի՝ սահմանադրական արդարադատության հարցերին նվիրված մասը՝ էջ 4-5-ում:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

2006թ.-ի հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպված «ՀՀ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին» գիտաժողովի բանակոր փուլը: Մանրամասները՝ էջ 6-ում:

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2006թ.-ի հոկտեմբերի 25-ին 149 փաստաբան երդվել է և փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստացել: Փաստաբանական պալատի նախագահը գոր է հերթական քննությունների արդյունքներից, բայց ավելի գոր է 2004թ.-ին ընդունված «Փաստաբանության մասին» օրենքից, որով փաստաբանների որակափորման քննություններ անցկացնելու իրավունք է ընձեռվել Փաստաբանական պալատին: Նաև կիրար փաստաբանների որակափորման քննություններ ընդունվում էին պետական բարձրագույն որակափորման հանձնաժողովի կողմից, որի կազմում կար ընդամենը 3 փաստաբան, մյուսները պետական կառույցի կողմից նշանակված անձինք էին, ոչ փաստաբաններ: Ներկայում քննություններ անցկացնում է Փաստաբանական պալատի որակափորման հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված 9 անդամից 6-ը փաստաբաններ են, հանձնաժողովի նախագահը և փաստաբանների առաջարկի հեղինակը՝ «ԼԻԳԼ ԸՆԱՅԵՐՆԱ» իրավաբանական ընկերության նախագահ է: Օրենքի այս կարևորագույն դրույթի առաջարկի հեղինակը՝ «ԼԻԳԼ ԸՆԱՅԵՐՆԱ» իրավաբանական ընկերության նախագահ, փաստաբան Կարեն Զարյանն է:

ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐ

2006թ.-ի հոկտեմբերի 21-ին Երևանում անցկացվեց ՀՀ դատական օրենսգրքի նախագծի առանձին հիմնախնդիրներին նվիրված սեմինար, որին մասնակցում են ՀՀ արդարադատության նախարարության, դատարանների, դատախազության, ոստիկանության, ՀՀ կառավարության իրավաբանական վարչության, Գերմանական տեխնիկական համագործակցության ներկայացուցիչներ, գիտնականներ և փորձագետներ Հայաստանից ու Գերմանիայից: Սեմինարի առանցքային թեմաներն էին նախադեպային իրավունքը, իրավունքի միասնական կիրառումը և վերաբննության գործընթացը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանության և օմբուդսմանի ինստիտուտի կայացմանն առնչվող հարցեր են քննարկվել նախագահ Ռոշարյանի և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոնմաս Համմերերի հոկտեմբերի 13-ի հանդիպման ընթացքում: Ռոշերտ Ռոշարյանն ասել է, որ Սահմանադրության և դատախավական համակարգի բարեփոխումների շնորհիվ էական ընդլայնվում է մարդու իրավունքների պաշտպանության, օմբուդսմանի ինստիտուտի ազդեցիկության ասիմետր բարձրացնելու հնարավորությունը: Նախագահի խոսքով՝ թե, դժվար է օմբուդսմանի մշակույթը չունեցող երկրում արագ կայացնել համակարգը, սակայն բոլոր կառույցների հետ հետևողական աշխատելու դեպքում մի քանի տարի անց զգալիորեն կրածրանա այդ ինստիտուտի արդյունավետությունը և հեղինակությունը:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԵՏք Է ՈՒՆԵԼԱՇՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ԹԵՇ ՌԴ

ՏԵՍԱԿԵՏ

Հարցը բավականին ցավոտ է և հրատապ: Դատական դեպարտամենտի ձևավորման առաջին խնդիրը մենք խնդիր ունեինք դատարանների շենքերում դատական ծառայողների բնականու գործունեությունը ապահովել և այդ նպատակով ունենալ համապատասխան վարչական տարածքներ: Եվ խնդիրը ծագեց այստեղ, որ որոշ դատարաններում (այս խնդիրը համատարած չէ) փաստարանները տարիներ շարունակ դատարանների շենքերում զբաղեցրել են տարածքներ: Թե ինչ իրավական հիմքերով՝ դրանք տարբեր ժամանակներում տարբեր են եղել, այդպիսի հիմքեր այժմ միանշանակ չկան: Եվ մեր կողմից պայման դրվեց, որ դատարանների շենքերը պետք է ծառայեն միայն արդարադատություն իրականացնելու՝ բավականին պատասխանատու գործառություն: Խնդիր եղավ նաև գույքագրել դատարարանների տարածքները, որպեսզի դրանք տրամադրվեն դատական ծառայողներին: Խնդիրը ակտուալ է. փաստաբանը չի կարող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել դատարանների շենքերում: Դա նաև երևույթ է, որ հակասում է դատավորների վարդագծի կանոններին: Փաստաբանը, լինելով դատարանի շենքում, ներկայացնելիս քաղաքացիների շահերը, դատավորի հետ գտնվում է անմիջական առօրյա շփման մեջ, և դա կարող է վճասել դատավորի հետինակուրյանը: Եվ ինչո՞ւ պետք է 500 փաստաբանից 10-ը արտոնյալ պայմաններով դատարանում ունենան գրասենյակային տարածք: Թող այս հարցին պատասխաննեն: Ինչո՞ւ ոչ 500-ը, և ո՞վ է որոշում, թե որ տարր արտոնյալ պայմաններով դատարանում ունենան տարածքներ: Եվ մենք խնդիր դրեցինք, որ դատարանների շենքերը ընդհանուրապես գերծ պահենք որպես փաստաբանների աշխատասենյակներ օգտագործելուց: Բայց միևնույն ժամանակ կլինեն փաստաբանների համար սենյակներ, որտեղ նրանք կլարդանան նախապատրաստվել համապատասխան դատական գործին: Բայց մշտական՝ այնտեղ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար՝ բացառովում է:

ԷՐԳԱՐ ՍԵՐՐԱՎԵՑԱՆ
ՀՀ Դատական դեպարտամենտի ղեկավար



Դատարանների շենքերում փաստաբանների «ծվարելու» պրակտիկան ձևավորվել է խորհրդային տարիներին, երբ փաստաբանությունը, ըստ էության, դատական համակարգի կցորդն էր և, բնականարար, չը իրականացնում իր հիմնական, այն է՝ իրավապաշտպան գործառություն: Այլ եր պատճառը, որ փաստաբանները շատ հաճախ նույնացվում էին դատարանի աշխատակիցների հետ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Հետևաբար, խորհրդային ժամանակների ավանդությունների և տրամաբանության առումով, փաստաբանների՝ դատարանի շենքերում աշխատելը արտադրող համարվել չէր կարող: Այլ է ներկան: Սակայն, ցավոք, մինչև հիմա խորհրդային մտածելակերպը գերիշխում է, և շատ փաստաբաններ իրենց դերին և գործառույթներին վերաբերում են խորհրդային տրամաբանությամբ:

Ինչ խոր՝ բացարձակապես անընդունելի է, որ փաստաբանի գրասենյակը գտնվի դատարանի, կամ թեկուզ այնային շենքում, որը կարող է դոյզն ինչ ազդել նրա անկախության վրա կամ կաշկանդել նրա մասնագիտական գործունեությունը: Անշուշտ փաստ է, որ ներկայումս շատ փաստաբաններ օրինկարգի, բայց ավելի հաճախ սուրյեկտիվ պատճառներով ի վիճակի չեն ունենալու սեփական գրասենյակներ կամ վարձակալելու դրանք: Սակայն, եթե այս հարցում որևէ մեկը պետք է աշակեցություն ցուցաբերի նրանց, ապա դա պետք է անի Փաստաբանների պալատը և ոչ թե պետությունը, առավել ևս դատարանը: Մանավանդ, որ Փաստաբանների պալատի «Փաստաբանության մասին» օրենքով և պալատի կանոնադրությամբ սահմանված խնդիրներից է իր անդամների մասնագիտական գործունեության իրականացմանը աջակցելը:

ԴԱՎԻԹ ԱԲԳԱՐՅԱՆ
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան



Կարծում եմ՝ տվյալ խնդիրն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմ:

Դրականը այն է, որ փաստաբանական ինստիտուտը, լինելով անկախ ինստիտուտ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմիններից, իր առաքելությունը իրականացնելիս չպետք է կախված լինի այդ մարմիններից: Հետևաբար դատարանի շենքերում փաստաբանական գրասենյակների առկայությունը ոչ միայն չի բխում փաստաբանական գործունեության իրականացման սկզբունքներից, այլ նաև արդարադատության շահերից:

Բացասականն էլ այն է, որ պետությունը, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ստանձնելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը, պետք է զիտակցի փաստաբանության դերի կարևորությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունները պաշտպանության գործընթացում, և համապատասխան միջոցներ ձեռնարկի՝ օժանդակելու այդ ինստիտուտի կայացմանը:

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

**ԳՈՐԾԱԿԵՐՆԵՐԻ ԿՈՐՑՐԵՑԻՆ ԱՁԽԱՏԱՆՔԸ, ԶԱՆՀԻ ՇԱՄԴԳՆԵԼ ԵՒՆ ՊԱՅՏՊԱՍԵԼ ԻՐԵՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

2005р.-ի նոյեմբերի 7-ին ԱրմենՏեխ չորս քաժինների մի խումբ աշխատակիցներ իրենց աշխատանքային, մասնագիտական, սոցիալական իրավունքների ուժնահարման մի շարք փաստերի վերաբերյալ ԱրմենՏեխ ղեկավարությանը ներկայացրեցին «Պահանջազիր», որի պահանջները չկատարելու դեպքում խոստացան 2005р.-ի նոյեմբերի 17-ին իրականացնել երկժամանոց նախազգուշական գործադրությունը՝ Նախազգուշական գործադրություն իրականացնան համար ստեղծվեց կոմիտե, որը «Պահանջազիրը» ներկայացրեց ընկերության գործադրի գլխավոր տնօրենին, ներքին առողջության և ԱրմենՏեխի աշխատակիցների արհմիութենական կոմիտեի նախազարհին։ Այս իրադարձությունները հասարակական մեծ հճնեղորդուն ստացան և մանրանասնորեն լուսաբանվեցին ԶԼՄ-ների կողմից։ ԱրմենՏեխի աշխատակիցների արհմիութենա աշխատակից-գործառու աշխատանքային վեճի դեպքում դավաճանեց աշխատակիցներին և կատարեց իր պարտականություններին ճշշտ հակառակ գործառույթ

միարժեքորեն պաշտպանեց գործառուի շահերը։ ԱրմենՏելի դեկապրոները ոչ մի կերպ չհամակերպվեցին այն նորի հետ, որ աշխատակիցը կարող է.

ունենալ դեկավարության
տեսակենտից տարբերվող կարծիք,
բարձրաձայն արտահայտել և
պաշտպանել իր կարծիքը,

պաշտպանել իր գործընկերների իրավունքները:
2005-ի նոյեմբերի 17-ին նախազգուշական գործադրության հրականացրած աշխատակիցների հանդեպ սկսվեցին կիրառվել մասամասն հետապնդումներ։
սկսվեց «ԱրմենՏես» ընդիւն նախազգուշական գործադրության հրականացրած աշխատակիցների» դատական պրոցեսը,
աշխատանքից ազատվեցին նախազգուշական գործադրության դեկալիարած «անհնազանդ» ստորաբաժանումների դեկալիարաները, իսկ հետազոտում՝ նաև մասնակիցները։

Այս ամենին գումարվեց նաև անկատար աշխատանքային օրենսդրության և դատական համակարգի առկայությունը, և աշխատակիցը մնաց բացարձակ անպաշտպան։ Նախազգուշական գործադրությունը հայտարարած աշխատակիցներին մնում էր ապավիճել միայն սեփական ուժերին և գործընկեր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի մասնագիտական աջակցությանը։ Արդեն տեղի ունեցած և ապագայուն սպասվող հետապնդումներին որևէ կերպ դիմակայելու համար նախազգուշական գործադրությունը իրականացրած աշխատակիցների կողմից ստեղծվեց ԱրմենՏելի աշխատակիցների «Հավատ» արհետակցական կազմակերպությունը, որը պետական գրանցում ստացավ 2005թ. դեկտեմբերի 13-ին։

Նախ տեղի ունեցավ ԱրմենՏելի կողմից գործադրության անօրինական ճանաչելու պահանջով ներկայացված հայցի քննությունը։ Շատ տարօրինակ ձևով Արարեկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը (դատավոր՝ Գոռչակորյան), դուրսգալով հայցի պահանջներից, անօրինական ճանաչեց նախազգուշական գործադրությունը։ ՀՀ քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարանը և ՀՀ Վեցարեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատը առաջին ատյանի դատարանի որոշումը բողեցին անփոփոխ։ Նախազգուշական գործադրության իրականացնողների համար պարզ դարձավ, որ բոլորին էլ տարբե՞ մտացածին և իրականությունից հետու պատրվակներով ազատելու են աշխատանքից, քանզի ԱրմենՏելի հայցադիմումի մեջ կար

այսպիսի մի միտք.

«գործադրութիւն իրականացումը չի բխում ՀՀ Սահմանադրության և մյուս օրենքների պահանջներից և դատարանի կողմից անօրինական ճանաչելուդպրում կարող է հիմք հանդիսանալ դրա մասնակիցներին աշխատանքից ազատելու համար»:

Նրանցաշխատանքից ազատելու՝
ԱրմենՏելի ղեկավարների
սպառնալիքները չմնացին լոկ
խոսքեր և մարդիկ կորցրեցին
իրենց աշխատանքը։ Կորցրեցին
իրենց աշխատանքը, քանզի
հանդգնել էին պաշտպանել
իրենց աշխատանքային, մասնաց
իրավունքները։

«Հավա» արհեստակցական կազմակերպությունը

Մենք վստահ ենք, որ միայն ՀՀ յուրաքանչ-
յուր քաղաքացու իրավունքների հետևո-
ղական իրականացման և պաշտպանության
շնորհիվ Հայաստանը կդառնա իրավական
և ժողովրդավարական պետություն:

Հայաստանի երիտասարդ
իրավաբանների ասոցիացիայի
մասնագիտական աջակցությամբ
շորջ մեկ տարի է զբաղվում է
այս հարցերով և հորախուրյուն
բոլորի արձանագրել է առաջին

հաջողությունները: Նախ՝ «ճախսազգուշական գործադրությունը» դիմել ենք ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի հետևյալ դրույթը՝ «Գործադրություն կողեւկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կողեւկտիվ վեճը չլուծվելու.... դեպքում մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցումն է», և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ Սահմանադրությանը հակառակ և անվավեր ճանաչելու համար, քանի որ դատարանը ճախսազգուշական գործադրությունը անօրինական է ճանաչել հենվելով աշխատանքային օրենսգրքի վերը նշված հոդվածների վրա: Վստահ ենք, որ ՍԴ-ն իր վարույթ կրննուին և կրավարքի մեր կողմից ներկայացված դիմումը, որը հնարակություն կտա վերականգնել ճախսազգուշական գործադրություն իրականացնելու ԱրմենՏելի աշխատավիճների խախտված սահմանադրական իրավունքը:

Առաջինը անօրինական ճանապարհով աշխատանքից ազատվեցին նախազգուշական գործադրություն իրականացրած բաժինների ղեկավարները՝ Ա. Ղուկասյանը և Ա. Արքահանջյանը: Ուրախությամբ պետք է նշեմ, որ շուրջ մեկ տարի տևած դատական գործընթացներից հետո վերջապես վերականգնեցվեցին Ա. Ղուկասյանի խախտած իրավունքները՝ հարթանակներ Արքիկի և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ասյանի, ՀՀ քաղաքացիական գործերով վերաբերիչ և ՀՀ վճռաբեկ դատարաններում: Հուտով են, որ շուտով ՀՀ քաղաքացիական գործերով վերաբերիչ դատարանում համանանա հաղթանակ կտոնի նաև Ա. Արքահանջյանը և մնացած համիլտոնի աշխատանքից ազատված աշխատակիցները: Մենք Վատահ ենք, որ միայն ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների հետևողական իրականացման և պաշտպանության շնորհիվ Հայաստանը կդառնա իրավական և ժողովրդավարական պետություն: Իսկ իրավական և ժողովրդավարական պետության կառուցմանը մենք մասնակցում ենք այսօրվանից:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՌԱՏՅԱՆ
«ԱրմենՏել» ՓԲԸ աշխատակիցների «Հավատ»
արհեստակցական կազմակերպության նախագահ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐԱՎՈՒՆՔ Է ԴԱՌԱՌԻՄ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐբ ԱՅՆ ՇԱՏԱԿ ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ Է

ՀԱՐԴԱՎՈՐԻ ՀՅՈՒՅՆ

-Պարոն Հարությունյան, սահմանադրական փոփոխությունների արդյունքում զգայիշորեն փոփոխվեցին նաև Սահմանադրական դատարանի լիազորությունները, ըստումկեց «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքը: Խնդրում եմ հայտնել Ձեր տեսակետը այս կապակցությամբ:

-Հարցին մոտենանք մի փոքր ճշգրտումով, որ լիազորությունների դաշտը էակես չի փոխվել, փոխվել են ՍԴ-ի լիազորությունների իրականացման նախադրյալները: Եվ այդ փոփոխությունները էական են: Էական են, քանի որ ընդհանրապես սահմանադրական արդարադատություն իրականացնելիս անկախության այլ բաղադրատարերի շարքում բացառիկ կարևոր նշանակություն ունի Սահմանադրական դատարանների գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորումը: Այստեղ խոսքը գործառնական անկախության և գործունակության մասին է: Եթե դատարանն ունի լիազորություն, որը չի իրացվում, ապա այդ լիազորությունը դառնում է վերացական լիազորություն: Ինչպես, օրինակ, մարդը, եթե ունի իրավունք, և այն չի իրացվում, նշանակում է՝ մարդն այդ իրավունքը պարզապես չունի: Իրավունքը իրավունք է դառնում միայն այն ժամանակ, եթե այն հստակ իրազորդելի իրավունք է, իրացվող իրավունք: Նոյն՝ բավականին ծանր վիճակում հայտնվել էնք մենք, և այդ վիճակը պայմանավորված էր նրանով, որ, ասենք, ՍԴ-ն իրավասություն ուներ գնահատելու նորմատիվ ակտերից օրենքների, կառավարության, ԱԺ-ի որոշումների, Նախագահի իրավական ակտերի սահմանադրականությունը, բայց այդ ակտերի գծով տաս տարի ոչ մի դիմում չէր ստացվել, իսկ որոշ հարցերով, օրինակ, օրենքի սահմանադրականության հարցով ընդամենը 8 գործ էր քննվել: Սա բավարար չէ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար: Սահմանադրական արդարադատությունը պետք է լինի անընդհատ, ընդորլուն և գործուն, որպեսզի վերահսկողության առարկան գտնվի այդ դաշտում: Հակառակ պարագայում՝ այդպիսի էականողիկ գնահատումն սահմանադրական արդարադատություն չի իրականացվի:

-Խնդրում ենք ասել, թե, ըստ Ձեզ, որո՞նք են կատարված ամենաէական փոփոխությունները:

-ՍԵՐ Սահմանադրության առանձքային փոփոխություններից մեկը մարդու իրավունքների վերաբերյալ մոտեցման մեթոդաբանության փոփոխումն է: Դա չափազանց կարևոր է, որ շատերը դեռ չեն ընկալում և զիտակցում, որ մեր Սահմանադրության նախորդ տարրերակում մարդու իրավունքների վերաբերյալ ըստ էության տեղ էր գտել այսպես կոչված ձևախեղված պողիալիվստական մոտեցումը, եթե խոսքը վերաբերում էր ոչ թե իրավունքները, այլ օրենքի գերակայությանը, և մարդկանց իրավունքները չին ճանաչված որպես բարձրագույն արժեք և անմիջական գործող իրավունքներ: Սահմանադրականորեն փոփոխվեց մարդու իրավունքի գերակայության սկզբունքը, և այդ իրավունքները ճանաչվեցին ոչ միայն որպես անմիջական գործող իրավունքներ, այլ նաև որպես բարձրագույն արժեք, այդ բիում մարդու արժանապատվությունը որպես այդ իրավունքների հենք, և այլևս այդ իրավունքները պետության համար դարձան պետական գործառույթների սահմանափակիչներ: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով՝ որպես անմիջական գործող իրավունքներ: Սա մերուդարձանական բոլորովին այլ մոտեցում է և այս մոտեցումը համահունչ է ոչ միայն այսօրվա եկորական չափանիշներին, այլ նաև մեր պատմական զարգացումների շատ հետաքրի ընդհանրացումներին՝ սկած 1184թ.-ի Գոշի Դատաստանագրքով, Որոգայր փառացով այս հարցը շատ խորը ընկալում և իրացում է գտել մեր պատմության մեջ: Եվ, բարերախտաբար, այսօր մենք ոչ միայն եկորական ավանդույթների, այլ նաև մեր պատմական ավանդույթների շարունակողն ենք դառնում, և սա պատմությունից ճիշտ դասեր քաղելու օրինակներից մեկն է: Սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով առանձքային փոփոխությունը, որ կատարվեց, այն



էր, որ ՍԴ լիազորությունները դարձվեցին գործուն լիազորություններ՝ փոփոխություն կատարելով հատկապես 101 հոդվածում և ընդլայնելով ՍԴ դիմող սուրյեկտների ցանկը: Այժմ Սահմանադրական դատարան դիմում են ոչ միայն երկու սուրյեկտներ, այլ դրանց ցանկը բավականին ընդլայնված է, և դիմելու հնարավորությունը բավականին հեշտացված և հստակեցված է: Նախկինում դիմում էին պատգամավորների 1/3-ը, ներկայում այդ թվով փոխվեց 1/5-ի, և փոփոխությունն անմիջապես իրեն զգացնել տվեց. այս 3 ամսվա ընթացքում արդեն ԱԺ պատգամավորներից երկու դիմում է ներկայացվել ՍԴ: Զաղաքացիները ՍԴ դիմելու հնարավորություն չունեին, այժմ նրանք կարող են դիմել ՍԴ, եթե դատական բոլոր մակարդակներում իրենք սպառել են պաշտպանության հնարավորությունները, վերջնական դատական ակտը ուժի մեջ է մտել, և այդ ակտով նրանց նկատմամբ կիրառվել է օրենքի նորմ, որի սահմանադրականությունը նրանք վիճարկում են: Խնդիրը բողնվել է միայն այս նեղ շրջանակում՝ օրենքի նորմի սահմանադրականության վիճարկումը կոնկրետ դատական գործով: Չնայած դրան՝ այս ընթացքում արդեն մեզ դիմել են շուրջ 430 քաղաքացի, որոնց մի մասը ծանոթանալով, ճշտելով պայմանները, դիմելու կարգը, իրավունքները և այլն, իրաժարկել գրավորդիմել: Պատկերացրեք՝ օրենքի սահմանադրականության հարցով 10 տարում դատարանը քննության է առել ընդամենը 8 գործ, իսկ միայն եթեր ամսների ընթացքում արդեն շուրջ 20 այդպիսի գործ է ընդունել քննության: ՍԴ-ի դիմերոշումները

իրականում կդառնան սահմանադրական իրավունքի և ընդհանուր օրենսդրության համար իրավունքի աղբյուր, և ներազբեցությունը սահմանադրական գործընթացների վրա կլինի շշափենի ու արդյունավետ։ Բացի դրանից՝ կարևոր պարագաներից մեկն այն է, որ մարդու իրավունքների պաշտպանինա-քաղորությունունեցավորմել ՍԴ։ Վերջինս արդեն երկու դիմում է ներկայացրել ՍԴ։ Մեկը քննության է առնվել և լրացնված կայացվել է սեփականության օտարան հարցերի վերաբերյալ, որի պահանջով այսօր օրենսդրական կարգավորումներ են փորձում իրականացնել, և երկրորդ դիմումի քննությունն էլ նշանակվել է դեկտեմբերի 12-ին, որտեղ մարդու իրավունքների պաշտպանը քննության առարկա է դարձել Կուսակցությունների մասին օրենքը։ ՍԴ դիմելու հնարավորություն են ստացել նաև տեղական ինքնակառավարման մարմինները, գլխավոր դատախազը, դատարանները։ Դատարաններից մեկ դիմում արդեն ստացվել է, և ՍԴ-ն որոշում կայացրել է։ Այսինքն՝ դիմոդերի շրջանակն այսօր կարելի է բավարար համարել՝ արդյունավետ սահմանադրական արդարադատություն իրականացնելու համար։

-Հաստիքված սահմանադրական փոփոխությունները արդյոք բավարար են Հայաստանում սահմանադրական արդարադատության իրականացման համար:

-Ես չեմ համարի, թե սահմանադրական այդ փոփոխություններով այս ոլորտում խնդիրներն ամբողջությամբ լուծված են: Այն լուծումները, որոնք արվել են, անհրաժեշտ են, բայց իմ կարծիքով՝ ոչ բավարար: Ոչ բավարար, որովհետև առանցքային երկու խնդիր դուրս է մնացել այսօրվա լուծումներից, թերևս երեքը կարելի է ասել:

Առաջինն այն է, որ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիրը մնացել է օղում կախված: Բոլոր երկրները, հատկապես 21-րդ դար թևակիսած առաջադիմական մոդել ունեցող երկրները, այդ խնդիրը լուծել են: Առաջինը գերմանացիները դեռևս 1949 թվականին իրենց հիմնական օրենքում անդրադարձան այս հարցին՝ որպես կարևորագույն խնդիրներից մեկը, և առաջին լիազորությունը, որ վերապահեցին դաշնային ՍԴ-ին, այն էր, որ վերջինս պետք է լուծի սահմանադրական մարմինների լիազորությունների հարցով առաջացած վեճերը և այդ վեճերը լուծի Սահմանադրությունը մեկնարաններով: Այսինքն՝ առաջ է գալիս նաև այսպես կոչված վերացական մեկնարանան անհրաժեշտություն, որը ծագում է վեճերի լուծման ժամանակ, և մեկնարաններով սահմանադրության նորմը, լուծվում են այդ վեճերը, և այդ մեկնարանությունը դառնում է պաշտոնական մեկնարանություն վեճերի լուծման ժամանակ:

Երկրորդ կարևոր խնդիրը այն էր, որ մարդու իրավունքների պաշտպանության հարցում ցուցաբերվելով վախսվորած մնութեցում: Այս մնութեցումը կա միջազգային սահմանադրական պրակտիկայում՝ առ ունեն Լեհաստանի Սահմանադրական տրիբունալը, Ռուսաստանի ՍԴ-ն, և սահմանափակվում է միայն օրենքի նորմի սահմանադրականության գնահատմամբ, սա թերևս բավարար չէ այն առաջադիմական մողեների առումով, որ այսօր կան Գերմանիայում, Իսպանիայում, մի շարք այլ երկրներում: Դասական մողենն այն է, որ եթե սահմանադրական իրավունքներն անմիջական գործող իրավունքներ և բարձրագույն արժեք են ճանաչվում (ՍԴ-ի մասին մեր օրենքում էլ ապահով է, որ ՍԴ-ն երաշխավորում է Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը), անմիջական գործողությունը չես կարող երաշխավորել, առանց իրավունքները որպես անմիջական գործող իրավունքներ անհրաժեշտ ձևով պաշտպանելու և ապահովելու: Այսինքն՝ դատարանը պետք է քննության առներ ոչ միայն օրենքի նորմի սահմանադրականությունը, այլ ճանապարհ, թե մարդու իրավունքներն արդյո՞ք վերջնական

Ըստվ պաշտպանվել են, թէ՞ ոչ։
Երբորդ հարցը կապված է շատ նուրբ և խորքային
պրոբլեմի հետ։ Ինչպես նախկին խորհրդային,
այնպիս էլ արևելյան Եվրոպայի շատ երկրներ, երբ
ժողովրդավարացման այս նոր ալիքի պայմաններում
փորձեցին իրենց դատարկավական բարեփոխումներն
իրականացնել, կանգնեցին հետևյալ հարցի առջև։
սահմանադրական արդարադատությունը լիարժեք
ներդնելն անհրաժեշտություն է։ Այս պարագաներում
ինչպե՞ս վարվել ենքարենսդրական ակտերի՝ օրենքին
համապատասխանության հարցի լուծման հետ։
Արդյո՞ք անհրաժեշտ է ստեղծել հասուկ վարչական
դատարաններ և դրանց միջոցով փորձել խնդիրը
լուծել կամ դա վերապահել ընդհանուր իրավասության
դատարաններին, թէ՞ այստեղ որոշակի տարանջատում
կատարել։ Երկրների մեծ մասը, հատկապես փոքր
երկրները, որոնք և մարդկային, և ֆինանսական
ռեսուրսների անհրաժեշտություն ունեն և չեն ձգուում
ստեղծել զածած դատարաններ, որոնք ավելի շատ
ներարկման օբյեկտ են դատնում, նաև Լեհաստանում,
Լլովինիայում և այլն, զնացին այն ճանապարհով, որ
հիմնականում ենքարենսդրական ակտերի՝ օրենքին
համապատասխանության հարցը վերապահեցին
ՍԴ-ներին։ Այսինքն ՍԴ-ն ինչո՞վ է տարբերվում այլ
դատարաններից։ սա իրավունքի դատարան է, մյուս
դատարանները փաստի դատարան են, որ կիրառման
կամ պայմանական հանգամանքներն են քննում,
իսկ ՍԴ-ն քննում է, թէ հենց ակտն ինքը որքանո՞վ
է սահմանադրական, իրավունք ունի՞ գոյություն
ունենալ, թէ՞ ոչ։ Եվ, ելեւով այս տրամադրանությունից,
առանձնացրեցին։ ՍԴ-ներին վերապահեցին ոչ
միայն օրենքի սահմանադրականության հարցը, ոչ
միայն նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանն
համապատասխանության հարցը, այլև այդ ակտերի՝
օրենքին համապատասխանության հարցը, միջազգային
պայմանագրերին համապատասխանության հարցը, պայմանագրերին
կամ Վարչական դատարաններին։ Մեզ մոտ
իրաժարվեցին այս մոտեցումից, պատճառարանելով,
թէ ցանկություն կա ստեղծել Վարչական
դատարանների համակարգ, իսկ այսօր կա նույնիսկ
որոշակի իրավական բաց այս հարցում։ Վարչական
դատարանը չկա, քաղաքացին ենքարենսդրական
ակտերին վերաբերող հարցերով ՍԴ դիմել չի կարող,
ընդհանուր իրավասության դատարանները նորմատիվ
իրավունք իրավասություն ունեն զնահատել բոլոր
ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցը,
բայց դատավարական օրենսգրքերն այստեղ որոշակի
արգելվեն են դառնում։ Այսինքն չկա որևէ հստակություն,
որի արդյունքում տուժում է անձը, նրա իրավունքները,
նրա իրավունքների պաշտպանությունը և, վերջին
հաշվով, արդարադատությունը։

Հարցեր կան, որոնք դեռևս լուծման փուլում են և
պետք է լուծվեն։ Ընդ որում պետք է լուծվեն ոչ թէ
հեծանիվ հայտնաբերելով, այլ միջազգային փորձը
խորությամբ հաշվի առնելով և տեսնելով, թէ հատկապես
նույնատիպ երկրներում, որոնք արդին ինչ-որ տեղ
ժողովրդավարական զարգացումների ճանապարհին
առաջընթաց քայլեր են կատարել, արձանագրել
արդյունքներ, ինչպե՞ս, ի՞նչ արդյունավետությամբ են
աշխատում այս ինստիտուտները, որ հնարավոր լինի
կատարելազորքել։ Այսինքն՝ այս փոփոխությունները
առնչվում են նաև սահմանադրական արդարադա-
տության համակարգի հետ, և ես համոզված եմ, որ
համակարգային բարեփոխումներ իրականացնելու
անհրաժեշտություն կա։

ԳԻՏԱԺՈՂՈՎՐԾ

**ԳԻՏԱԺՈՂՈՎՐԾ՝ ՈՐՊԵՍ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՁԵԿ**

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման առաջնային ու գլխավոր նախապայմանը քաղաքացիների բարձր իրավագիտակցությունն է ու նրանց լավատեղյակությունը երկրի Սահմանադրությանը և օրենքներին: Սահմանական ՀՀ-ում, Սահմանադրության փոփոխությունների ընդունման և դրանց համապատասխան տեղի ունեցող օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացներում, առանձնակի է կարևորվում բնակչությանը նմանօրինակ փոփոխություններին հասու դարձնելու, երկրում հասարակական բարձր իրավագիտակցություն, զարգացած իրավական մշակույթ և դաստիարակություն ձևավորելու անհրաժեշտությունը:

Բացի դրանից՝ փոփոխվող օրենսդրությունը պահանջում է անընդհատ ուսումնասիրություն և վերլուծություն: Այս առումով, սակայն, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսումնական ծրագրերը բույլ չեն տալիս վերանայել նախկինում դասավանդված, բայց հետազոտում փոփոխված իրավունքի ճյուղը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Սահմանադրությանն ու սահմանադրական իրավունքին: Միևնույն ժամանակ, իրավաբանական բուհերում և ֆակուլտետներում բավարար չափով չեն կազմակերպվում իրավաբան ուսանողների իրավավերլուծական մտքի զարգացմանն ուղղված միջոցառումներ, երբ ուսանողների կողմից կրնարկվեն ու կրացահայտվեն իրավական ակտերի թերություններն ու առավելությունները: Նույնը վերաբերում է նաև շրջանավարտներին և պրակտիկ իրավաբաններին: Նման պայմաններում իրավագիտության ոլորտում գիտելիքների վերանայման լավագույն առիթ և միջոց կարող են հանդիսանալ ոչ ֆորմալ կրթության այնպիսի ձևեր, ինչպիսիք են գիտաժողովները: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումն էլ հանդիսանում է ՀԵԻԱ-ի կանոնադրական նպատակներից մեկը: ՀԵԻԱ-ի կողմից «ՀՀ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության կայացման ճանապարհին» քեմայով գիտաժողովը կազմակերպվեց 2006թ.-ի հոկտեմբերին՝ Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի աջակցությամբ՝ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Գիտաժողովի նպատակն էր խրանել սահմանադրական իրավունքի ոլորտում երիտասարդ իրավաբանների կողմից ինքնուրույն գիտական հետազոտությունների կատարումը, նրանց ներգրավել սահմանադրական նոր դրույթներից բխող տարրեր օրենսդրական ակտերի քննարկումներին, նպատել ՀՀ Սահմանադրության նոր դրույթների և օրենսդրական

փոփոխությունների հասարակական իրազեկմանը: Գիտաժողովի բանավոր փուլը տեղի ունեցավ 2006թ.-ի հոկտեմբերի 25-ին՝ Գոռվիլեն Խյուլիփ Երևան հյուրանոցում: Միջոցառման գրավոր փուլի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված 19 գրավոր աշխատանքների գնահատման արդյունքում առավելագույն միավորների հեղինակները մասնակցեցին եզրափակիչ՝ բանավոր փուլին, որի ավարտից հետո ամփոփվեցին գիտաժողովի ընդունությունը: Բանավորի փուլի հաղող ճանաչվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հայկ Կարապետյանը, որը միաժամանակ արժանացավ նաև «Գիտաժողովի հաղողություն» մրցանակին: Գիտաժողովի 2-րդ մրցանակի ճանաչվեց և «Լավագույն գրավոր գեկույց» մրցանակին արժանացավ Երևանի Խ. Արմելյանի անվան ՀՊՄՀ իրավագիտության բաժնի 5-րդ կուրսի ուսանողությի Եսրեր Քարսելյանը: Նոյն համալսարանի իրավագիտության բաժնի 5-րդ կուրսի ուսանողությի Գայանե Հակոբյանը արժանացավ գիտաժողովի 3-րդ մրցանակին: Գիտաժողովի բանավոր փուլին մասնակցելու համար համապատասխան մրցանակների արժանացավ նաև ԱՏԿ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողությի Սյուզաննա Սողոմոնյանը, Գավառի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողությի Սյուզաննա Մուխսիկարյանը և ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Քազրատ Ղազինյանը: Գիտաժողովի բանավոր փուլի դատավորներն էին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության և զարգացման վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական Վրեժ Գասպարյանը, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի գործադիր տնօրեն, փաստաբան Էլինար Վարդանյանը և ՀԵԻԱ-ի փոխնախագահ, փաստաբան Դավիթ Արգարյանը: Միջոցառումը արձագանք գտավ նաև ԶԼՄ-ների շրջանում: Առաջիկա մեկ ամսվա ընթացքում գիտաժողովի բանավոր փուլի մասնակիցների գեկույցները կիրատարակվեն առանձին գրքույկով և կտրամադրվեն իրավաբանական ֆակուլտետների գրադարաններին: Դրանք անվճար կտրամադրվեն նաև իրավաբան ուսանողների, իրավաբանության հետաքրքրվող անձանց և շահագրգիռ կառույցների շրջանում:



ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՇԱՄԱՆՈՒՄ

1995թ.-ի հուլիսի 5-ին հայ ժողովուրդը, ընդունելով Սահմանադրություն, կարևորագույն քայլ կատարեց պետության հիմքերի ամրապնդման և պետականության կայացման ու զարգացման գործում: Սահմանադրությունը ընկալվեց զուտ որպես պետության խորհրդանշից, ինչը տրամաբանական է, և այդպես պետք է, որ լինի: Սակայն Սահմանադրությունը հասարակության լայն շերտերի կողմից չընդունվեց որպես իրավունքների և ազատությունների պաշտպանության միջոց: Դրա հետևանքով առաջացավ և մինչև հիմա, ցավոք, շարունակում է առկա լինել «անշրջապետ» հասարակության և Սահմանադրության միջև: Մինչդեռ Սահմանադրությունը անժմխտելի կարևոր նշանակություն ունի քաղաքացիական հասարակության կայացման գործում: Այդպիսի հասարակության գործությունը հնարավոր է միայն իրավական պետությունում, որտեղ առկա է իրավական հավասարությունը: Վերջինս հնարավոր և իրական է դարձնում ազատությունը համբռնիանուր նորմատիվիկ-իրավական ձևի ներքո, որոշակի իրավակարգի տեսրով: Հենց այդ նորմատիվ-իրավական ձևն է Սահմանադրությունը, որին տրված են քազմանուոյք, հաճախ նոյնիսկ հակասական բնորոշումներ, սակայն սահմանադրական զարգացումների արդի միտումները հիմք են տալիս պնդելու, որ Սահմանադրությունը, չնայած իր քաղաքական հենքին, այնուամենայնիվ պետք է հանդիս զա որպես հասարակական համաձայնության արդյունք՝ կոչված պաշտպանելու մարդու և քաղաքացու իրմանական իրավունքներն ու ազատությունները: Եթե նկատի ունենանք սահմանադրությունների ստեղծման հայտնի նպատակները, ապա ակնհայտ է, որ գործում ենք քաղաքացիական հասարակության հարթությունում, ուստի, իրեն ժողովրդավար համարող և իրավականի հավակնող պետությունը չափելով է Սահմանադրությունը իր ձեռքում ունենա որպես սուր, որ ճնշի հասարակության առջև, այլ ինքը՝ հասարակությունը պետք է կարողանա իիմնելի Սահմանադրության վրա՝ իշխանությունը սահմանափակելով իրավունքով:

2005թ.-ի օգոստի 27-ի հանրաքելի արդյունքում ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխությունները ընդհանուր առմանք առաջընթացային էին, սակայն՝ վերապահումով: Այնուամենայնիվ դրանք կարելի է գործադրել միայն ի նպաստ ժողովրդավարության և ոչ երբեք՝ հակառակը: Յանկացած սահմանադրական դրույք այս կամ այն չափով առնչվում է քաղաքացիական հասարակությանը, սակայն, կարծում ենք, այս խնդրի հետ կապված, առավել կարևոր է ին այն փոփոխությունները, որոնք կատարվեցին նարդու կազմացուի հիմնարար իրավունքների և ազատությունների, ինչպես նաև՝ իշխանությունների քաժանման, զսպումների և հակակշիռների դրութներում: Սահմանադրության երկրորդ գլխում կատարված փոփոխությունները սպեկի համահունչ դարձրին մարդու իրավունքներին առնչվող սահմանադրական դրույքները Եվրոպական կոնվենցիային: Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրելով մարդու իրավունքները և արժանապատվությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք՝ երաշխիք ստեղծվեց իրավունքով իշխանությունը սահմանափակելու, հետևարար՝ իրավունքի գերակայության համար: Հաճախականության նախագահի լիազորությունների կրծատումը իր երթին նպաստեց իշխանության երեք թերթի հարաբերական անկախության ապահովմանը: Չկա ազատություն առանց օրենքի, և իշխանության քաժանումը երեք ճյուղերի միջև կոչված է ապահովելու այդ ազատությունը: Միևնույն ժամանակ պետք է գերակա լինի ոչ թե օրենքը, այլ իրավունքը՝ որպես անձի բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների ապահովման երաշխիք:

Սակայն ներսահմանադրական հակասությունների վերացումը անհրաժեշտ է, քայլ ոչ բավարար քաղաքացիական հասարակության կայացման համար: Խստ կարևոր է հասարակության, իշխանության ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի բավարար իրավագիտակցությունը,



ՏԵՍԱԿ

ունակությունը՝ ընկալելու Սահմանադրությունը, պատրաստականությունը՝ կրելու իրեն իսկ վերապահված իրավունքները: Չենք կարող խստել քաղաքացիական հասարակության կայացման մասին, եթե չկա անհատների ինքնակառավարվելու ցանկությունը: Անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսերպի հասարակական կայուն վերաբերություն՝ ձևափորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակնական քաղաքատարքը: Այս փուլում արդեն սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, որը Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը, որտեղ սահմանադրական նորմերն ու կզբուները ապրող իրողություն են, ձևափորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ որ բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն և կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության մեջութիւնը, այլ քաղաքացիական հասարակության հիմնական օրենքն է, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխափորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարչագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքը: Այնուամենայնիվ՝ ՀՀ Սահմանադրությունը, կատարված փոփոխություններուն ոչ միայն հշակում է իրավական պետության գաղափարը, այլև նեխանականությունը գործարկումն երաշխափորել է սահմանում դրա իրականացման համար: Կատարյալ չինելով հանդերձ՝ այն հնարակությունը է տալիս ապահովելու իրավունքի գերակայությունը, պաշտպանելու մեր իրավունքները և կառավարվելու հավասարակշռված օրենսդր, գործադրի և դատական իշխանությունների կողմից:

Այնուամենայնիվ՝ ՀՀ Սահմանադրությունը, կատարված փոփոխություններուն ոչ միայն հշակում է իրավական պետության գաղափարը, այլև նեխանականությունը գործարկումն երաշխափորել է սահմանում դրա իրականացման համար: Կատարյալ չինելով հանդերձ՝ այն հնարակությունը է տալիս ապահովելու իրավունքի գերակայությունը, պաշտպանելու մեր իրավունքները և կառավարվելու հավասարակշռված օրենսդր, գործադրի և դատական իշխանությունների կողմից:

Եսքեր Բարսեղյան
Երևանի Խ. Արքյանի անվան ՀՊՄՀ
իրավագիտության բաժնի 5-րդ կուրսի
ուսանողության, գիտաժողովի 2-րդ մրցանակակիր,
արժանացել է «Լավագույն գրավոր գեկույց»
մրցանակին

Կ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԱՅԿԱՐ

Նյու-Հեմալիարում, եթե խաչմերուկում հանդիպում են սայլակավոր երկու մոտոցիկլետներ, ապա երկու մոտոցիկլետներն էլ պետք է կանգնեն և ոչ մեկը իրավունք չունի շարժվել իր տեղից, քանի չի հեռացել մյուսը:

Կենտուկի նահանգի օրենքով կանայք կարող են մարդկանց երևալ լողազգեստով միայն այն դեպքում, եթե նրանք զինված են ճիպոտով:

Տեխասում օրենքը հանցագործին հարկադրում է կատարվելիք հանցագործության մասին բանավոր կամ գրավոր նախազգուշացնել այն իրավործելուց 13 ժամ առաջ:

Այդահու նահանգի Մոնրի քաղաքում կարելի է պարել միայն այնպես, որ երկու պարողների միջև լինի երևացող տարածություն:

Նյու-Յորքում արգելվում է ավանակին լողացնել տաշտակում:

Սեն-Լյուիսում կանայք պարտավոր են ոտից գլուխ հագնված լինել հրշեցի փրկելու փորձից առաջ:

Փաստաբան - Եթե ես պատամի էի, իմ նվիրական երազանքն էր՝ ծովահեն դառնալ:

Հաճախորդ - Չեր քախորը բերել է: Բոլորին չէ, որ հաջողվում է իրականացնել պատամենկան տարիների երազանքը:

Յորանասունամյա ծերութին հանդիպում է իր որսունամյա ծանոթին:

- Լավ տեսք ունես, որտեղի՞ց ես զախի:
- Բանտից: Նստել եմ տասը տարի՝ բնաբարության համար:
- Ինչպէ՞ս: Դեռ տասը տարի առաջ դր ասում էիր, որ դա քեզ այլս չի հուզում:
- Այս, պատկերացրու, ես ինչքան որախացա, երբ դատավորը հակառակն ապացուցեց:

Դատավոր - Եվ այսպէս՝ ամքաստանյալ, դուք հաստատում եք, որ ոչինչ չեք փախցրել: Իսկ ինչո՞ւ եք դուք մտել որիշի բնակարանը և այն էլ՝ գիշերը: Ամքաստանյալ - Ես Ձեզ, պարոն դատավոր, չեմ հասկանում: Եթե դուք ինձ վերջին անգամ դատել եք գողության համար, դուք կշտամբել եք, թե ես գողություն եմ արել «օրը ցերենկով»: Այժմ դուրս է զախիս, որ չի կարելի գողանալ նաև գիշերները: Այդ դեպքում ես ե՞րբ կարող եմ գրանքել իմ արիեստով:

- Այդ դո՞ւք եք խորհուրդներ տախս դատական գործերով:

- Այսու:
- Ներեցեք ... իսկ այդ գործում դուք փորձ ունե՞ք :
- Իհարկե ... ես ինքս տասն անգամ դատվել եմ:

Ընտանեկան քունք վեճի ժամանակ կինը լացակումած ասում է.

- Ավելի լավ կլիներ, որ ես ամսանանայի հրեշի հետ:
- Դա արդեն հնարավոր չէր լինի : Օրենքն արյունակցական ամուսնություններ չի բույլատրում:

«Դատավորի կողմնապահությունը զախս է նրանից, որ նա ընտիր կապերի մեջ է իմ կնոջ հետ»:

(հայացադիմումից)

«Աննայի քաշի և նրա կողմից քարշ տրվող բազմոց-մահճակալի անհամապատասխանությունը հասցրել է նրա շուր զալուն»:

(վճռից)

«Սիսակյանին աշխատանքից ազատունը կատարվել է ոչ ճիշտ, քանի որ ճիշտ լինելու հիմքերը բացակայում են»:

(գրությունից)

«Վարդանյանի տնտեսությունում հայտնաբերվեցին չորս խոճկորներ, վեցը եղին և կցեցին գործին, որպես իրեղեն ապացույց»:

(վճռից)

«Երեկ ես ժողովի չեկա, որովհետև ավագ քննիչի հետ գրադած էի կողոպուտով»:

(բացատրությունից)

«Այս մոտոցիկլետը ես գնել եմ ձեռքի վրայից, կնոջս հետ միասին»:

(բացատրությունից)



ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Փաստ.՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ ega_e_e_e@aa.a.a

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համար՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ» ՏԱՐԱԾՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակ՝ 500 օրինակ

Ծավալը՝ 1 տպ. մամուլ

Ստորագրված է տպագրության
31.10.2006թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից